

Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք Շինարարների փողոց 2/1
հասցեում նախատեսվող գյուղատնտեսական մթերքների
պահեստներ

Քաղաքացի՝

Օ.Ախվերդյանը

<<Էկո Մենեջմենթ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ3

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.2 Հապավումներ3

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը4

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)5

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....5

12

1.4.2 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց13

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....14

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ15

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....16

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա18

1.4.7 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ18

1.4.8 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....19

1.5 Նախատեսվող գործունեությունը.....21

1.6 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները21

1.7 Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը.....22

1.8 Կլիման և օդերևութաբանական պայմանները.....24

1.9 Բուսական և կենդանական աշխարհը28

2.5.1 Բուսական աշխարհը.....28

2.5.2 Կենդանական աշխարհը.....29

2.6 Հողային ռեսուրսներ30

2.7 Թափոնների կառավարում.....30

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....31

2.1 Ռիսկերի գնահատում.....31

2.2 Արտանետումների աղբյուրները32

2.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....32

2.3.1 Մթնոլորտային օդ.....32

2.3.2 Ջրային ռեսուրսներ.....32

2.3.3 Հողային ռեսուրսներ.....33

3. Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....34

3.1 Աղմուկ.....36

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....37

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....39

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ Օնիկ Ախվերդյան

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք Շինարարների փողոց 2/1

1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Արմավիրի մարզ գ.Բաղրամյան

1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Արմավիրի մարզ գ.Բաղրամյան

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գյուղատնտեսական պահեստների կառուցման նախագիծը նախատեսվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում Շինարարների փողոց 2/1 հասցեում:

Աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Պահեստային շինությունների աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ, Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնքում պահեստային տարածքների կառուցման նախագծային աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել անհատ կառուցապատող Օնիկ Ախվերդյանի պատվերը «Նշան Քեփիթյան» ՍՊԸ-ին, հողամասի սեփականության վկայականը՝ տրված անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, Բաղրամյան համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Հատակագծային լուծումները իրականացված են պատվիրատուի առաջադրանքին համապատասխան:

Պահեստային տարածքները նախատեսվում է կառուցել ՀՀ, Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում: Հիմնական շինությունը իրենից ներկայացնում է մեկ հարկանի շինություն: Հարկի բարձրությունը՝ առավելագույն 7.2մ, 6.2մ և 2.4մ: Օբյեկտը ապահովված է միջանցիկ օդափոխությամբ: Տանիքը երկլանջ է, մետաղական հիմնակմախքով կազմակերպված ջրահեռացմամբ՝ դեպի սեփական տարածք. տանիքածածկը՝ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ.

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

Տեխնիկական տվյալներ՝

- Ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է՝ 0.4023 հա,
- Կառուցապատման մակերեսը՝ 1812 քմ;
- Խճային հիմքով ճանապարհներ՝ 581 քմ;
- Կանաչապատման մակերեսը՝ 1630 քմ – 40.52%:
- Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
- գործառնական նշանակությունը՝ Այլ հողատեսք:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում նախատեսվում է տնկել բերքատու ծառեր՝ ծիրանենիներ մոտ 100 հատ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:




թիվը	այրում	սահմանի անվանումը	Տարածքի անվանումը	մասնագի	սրահներ
2	1	Գյուղատնտեսական մթերքների պահեստ	ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում	Ճ	
թերթի		օբյեկտի անվանումը	Գյուղատնտեսական մթերքների պահեստ	ՄՊԸ գնորդ	Ն. Քեփիթյան
13	մասշտաբ	թերթի անվանումը	ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԳԻԾ	ճարտարագետ	Ն. Քեփիթյան
				ճարտարագետ	Է. Ղարիբյան
				համակարգչային ձև	Ա. Քեփիթյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Բնակավայրի անվանումը _____ ին Հողատերի անունը _____
 Արևմտյան կողմի վերջնական սահմանագիծը _____
 Գ. Բաղրամյան _____
 Կ. Բաղրամյան _____
 Զատիկի ամիսը _____ Գրանցման համարը _____

Մասշտաբ 1:2000



ՀՈՂԱՄԱՍԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ		Քանակ մետրեր մետր	ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ		Գծային չափերը	սահմանագիծը սեփականատերի կամ հողթղթագործի	Շ Ե Ն Բ, Շ Ի Ն ՈՒ Թ Յ Ա Ն ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ	
Մակերեսը (հա)	0.4023		X	Y			Հանրային գտնվող հատված	Գործարարական նշանակությունը (անվանումը)
Ծածկագիրը	0134-0004							
Նպատակային նշանակությունը	Գյուղատնտեսական							
Գործառական նշանակությունը	Ս/Հ հողատեր							
Հողամասը ծանրաբեռնված է								





Կատարող _____ Մանուկյան Աստղիկ Գուրգենի
 Որակավորման վկայականի համարը «096» տրման ամիս, ամսաթիվը «27.02.2012»
 Իրավաբանական անձ 01U221947 ԱԾ «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՍՏԳԻԿ»
 Ինքնուրույն գործընկերության համարը _____

26.05.18 2018 թ.
 Վերջնական

ՀՈԴԱՄԱՍԻ

ԿԵՆՏՐՈՆ	Y	X	ԳՆԱՀԱՏ
1	4451460.92	8445639.28	52.09
2	4451500.72	8445672.89	92.06
3	4451426.92	8445727.93	51.83
4	4451377.80	8445711.38	7.65
5	4451380.02	8445704.05	6.60
6	4451386.50	8445705.35	11.17
7	4451397.50	8445703.41	9.15
8	4451406.56	8445702.11	14.33
9	4451420.15	8445697.58	5.06
10	4451424.03	8445694.34	4.34
11	4451425.97	8445690.45	12.46
12	4451431.80	8445679.44	11.07
13	4451435.68	8445669.08	7.80
14	4451441.51	8445663.90	18.56
15	4451450.57	8445647.70	13.35
1	4451460.92	8445639.28	





Անվանացանկ
1. գյուղաբնակավայրի մեծերի պահեստ

թիվը	արժու	տարածքի անվանումը	տարածքի	պարզվող
3	1	Գյուղաբնակավայրի մեծերի պահեստ «Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում»	ճ	
թիվերը		դրաների անվանումը	ՄԴԸ գրեթե	Ն. Քեփիթյան
13	500	գյուղաբնակավայրի մեծերի պահեստ	ճարտարագետ	Ն. Քեփիթյան
		գյուղաբնակավայրի մեծերի անվանումը	ճարտարագետ	Է. Ղարիբյան
		ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ	համախմբագրված են	Ա. Քեփիթյան

1.4.2 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տեղեկությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևի հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տեղեկությունը ծրագրվում է 24 ամիս:

ՆՏ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում կառուցվելիք գյուղատնտեսական մթերքների պահեսարի շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակացույց աշխատանքների փնտրությունը երկու փարի

№	Աշխատանքի անվանումը	Աշխատանքային ամիսներ											
		1-2	3-4	5-6	7-8	9-10	11-12	13-14	15-16	17-18	19-20	21-22	23-24
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Նողային աշխատանքներ	■											
2.	Պարեր		■										
3.	Նախապահ		■	■									
4.	Տանիք - ծածկոց			■	■	■							
5.	Բարեկարգում							■	■	■			
6.	Էլեկտրոֆիկացում									■	■	■	
7.	Գազաֆիկացում											■	■

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆՏՐԱԿՏԱՆԵՐԻ ՄԵՃԻՆԻՍՏՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ

ՀՀ Կառավարման Որոշում՝ 15.01.2009թ. N144-Ն, СНиП III-4-80* Москва 2000г

Շինարարության ընթացքում բոլոր աշխատողները՝ բանվորները, շինարարության անվտանգությունն ապահովող պատասխանատու անձիք և, հատկապես շին, մեխանիզմների հետ աշխատողները պետք է անթերի և մեծ պատասխանատվությամբ կատարեն անվտանգության բոլոր կանոնները :

Ամեն դեպքում պետք է ուշադիր լինել, վթարի դեպքում անմիջապես կանգնեցնել աշխատանքները, վերացնել վթարը և հետո միայն շարունակել աշխատանքները :

Աշխույժը ամեն աշխատանքային օրն սկսելուց առաջ շինարարությունն իրականացնող բոլոր անձանց պետք է ծանոթացնի տվյալ օրվա աշխատանքային ծրագրին և հիշեցնի անվտանգության կանոնները և նրաց պարտականությունը այդ կանոններն անթերի կատարելու համար, որն ապահովում է յուրաքանչյուրի անվտանգությունը, ստուգ, որ բանվորները կրեն իրենց աշխատանքների բնույթին համապատասխան համազգեստ և անվտանգության պարագաներ՝ ռետինե ձեռնոցներ, ռետինե երկարաձիտ կոշիկներ, պաշտպանիչ գլխարկ, ակնոցներ և բարձրության վրա աշխատելու համար ամրագոտիներ : Մեխանիզմների հետ աշխատողները պետք է ստուգեն իրեց մեխանիզմների, սարքավորումների, ճոպանների աշխատանքային վիճակը և թերության դեպքում այն պարտադիր նորոգեն, նոր միայն սկսեն աշխատանքը :

Երբ մինչև համապատասխան բարձրության վրա կատարվում է արտաքին պատերի իրականացում, կատարվում է մեկուսացման աշխատանքներ, ամրանացանցը հանվում է և կատարվում ետլիցք : Ետլիցքը որոշ տեղերում կատարվում է ձեռքով :

Էքսկավատորների և բուլդոզերի աշխատանքները դադարեցնելուց հետո (ընդմիջման ժամին կամ աշխատանքի վերջում) էքսկավատորի շերեփն ու բուլդոզերի թին անպայման պետք է ցած իջեցվի, կպած լինի գետնին և լինի դատարկ :

Շինմոնտաժային աշխատանքների ժամանակ չի կարելի գտնվել այն մասում, ուր կռունկի սլաքը բարձրացրած բեռով շարժվում է, դա խստիվ արգելվում է ըստ անվտանգության կանոնների, որը պետք է անվերապահորեն կատարել :

Խստիվ արգելվում է աշխատանքների դադարի ժամանակ կռունկից կախված բեռների առկայությունը : Բեռը ոչ մի դեպքում չի կարելի վերնում կռունկից կախված թողնել և անջատել մեխանիզմը :

Բեռի անկման վտանգավոր սահմանագիծը նշահարվում է փոքրիկ դրոշակներով կամ արգելասահմանի վտանգավոր գոտիներում տեղադրվում են ցուցատախտակներ համապատասխան գրություններով:

Բոլոր արտաքին ցանցերի աշխատանքները կատարելիս մինչև հողի ետլիցքը համապատասխան մարմինների ներկայությունը պարտադիր է: Կազմվում է համապատասխան ակտ աշխատանքի որակի և ապահով շահագործման վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Պահեստային շինությունների աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 15մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ -5 մարդ

Արհեստագործներ և բանվորներ, վարորդներ -10 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

1.4.7 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Հողային աշխատանքների կատարման համար օգտագործվում են թրթուրավոր էքսկավատոր:

Փոստրակի քանդման աշխատանքներից հետո բուլտոզերը հարթեցնում է այն:

Տվյալ հատվածի արտաքին պատերի իրականացումից հետո կատարվում է մեկուսացման աշխատանքներ և հողի ետլիցք շերտ-շերտ: Յուրաքանչյուր 50սմ հողի շերտ լցնելուց հետո կատարվում է թաց և չոր տոփանում, որից տվյալ հատվածի արտաքին պատերի իրականացումից հետո կատարվում է մեկուսացման աշխատանքներ և հողի ետլիցք շերտ-շերտ:

N Ը/Կ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չ/Մ	ՔԱՆԱԿ
1	ԱՎՏՈՒՆՔՆԱԹԱՓ ՄԵՔԵՆԱ	ՀԱՏ	1
2	ԷՔՍԿԱՎԱՏՈՐ	ՀԱՏ	1
3	ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԿՌՈՒՆԿ	ՀԱՏ	1
4	ԲԵՏՈՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ ՊՏՏՎ. ԹԱՓՔՈՎ	ՀԱՏ	1

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.4.8 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ մոտ 21600 կգ եւ շինարարական աղբն է՝ 20խմ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 10 \times 0.025) \times 720 = 237.6 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

$$U_1 = 500 \times 0.0015 \times 180 = 135 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 372.6 խմ/շին.ժամ:

Պահեստային տարածքների ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի:

Տարածքում գազաֆիկացումը իրականացվելու է համաձայն պայմանագրի (կցվում է), պահեստի ջեռուցումը կիրականացվի ջրաջեռուցիչ կաթսայով:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Էլեկտրամատակարարումը շինարարության և շահագործման փուլերում կիրականացվի համաձայն պայմանագրի:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱՄ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեությունը

Գյուղատնտեսական պահեստների կառուցման նախագիծը նախատեսվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում Շինարարների փողոց 2/1 հասցեում: Պահեստը նախատեսվում է գյուղատնտեսական ապրանքների պահման և տեսակավորման համար: Տարածքի հարևանությամբ է գտնվում բնակելի տներ, գյուղատնտեսական նշանակության հողեր: Հեռավորությունը մոտակա բնակելի և այլ շինություններից կազմում է մոտ 20մ և ավել:

2.2 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, ունի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածություն:

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք: Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով: Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են տվյալ տարածաշրջանում, հիմնականում գետային նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ: Արարատյան հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և աղուտամարգագետնային լանդշաֆտները: Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում՝ շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատ - կիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեդլենդներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին: Կիսաանապատի ռելիեֆը ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան մասում՝ քարքարոտ: Տարածաշրջանում հանդիպող յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով:

2.3 *Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը*

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով: Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետևյալ տարատեսակները՝ կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ:

Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարսմամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆացիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Դրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ: Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ՝ կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները: Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ: Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ: Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ: Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն փոշենման տարրերի խառնուրդներ կամ էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում:

Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին կոպիճով: Հանդիպում է նաև խոշոր կոպիճ: Բեկորները կազմված են բազալտներից, տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք

հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև: Մանրախճա-կոպճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ: Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է:

Տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում: Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են այլովիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևույթային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը:

Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:

2.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանը գտնվում է Արարատյան հարթավայրում: Վերջինս հանդիսանում է հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին: Այն իրենից ներկայացնում է Հայկական Լեռնաշխարհի առավել ցածր և պարփակված մասերից մեկը: Կլիմայական գոտուն բնորոշ առանձնահատկությունը խիստ մայրցամաքային լինելն է, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -31°C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 41°C, ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 25.7°C: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20	12.9	5.7	-0.9	11.6	-31	41

Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 62%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 29%:

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 260 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 44 մմ, նվազագույնը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ 9-11 մմ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 5-ում:

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը													միջին ամսական օրական առավելագույն , մմ			Ձևածածկույթ		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տամոլորտային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ			
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր							
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92			
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42						

2.5 Օդային ավազան

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Բաղրամյան համայնքի մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում տրանսպորտային միջոցների արտանետումները:

Բաղրամյան համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նախագիծը¹: Ըստ այդ նախագծի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Բաղրամյան համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.6 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» կողմից:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.7 Բուսական և կենդանական աշխարհը

Գործունեության ենթակա տարածքը և հարակից տարածքները հանդիսանում են բնակելի և գյուղատնտեսական նշանակության հողեր: Ժամանակի ընթացքում ենթարկվել են անտրոպոգեն ազդեցությունների՝ կառուցվել են բնակելի տներ, հողերը մշակվել են, իրականացվել է անասնաբուծություն: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական աշխարհի տեսակներ չկան:

2.7.1 Բուսական աշխարհը

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի, ավազա-կավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղաձաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrusa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օջան Թամամջյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն Արարատյան (*Tritiicum araraicum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս

բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն: Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային գոտու տեսակների ինչպես կազմը, այնպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

2.7.2 Կենդանական աշխարհը

Տարածաշրջանում դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները: Տարածված են ցածր բարձրության (մինչև 1000 մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67 տեսակը թռչուն, 15 տեսակը սողուն և 3 տեսակը երկկենցաղ: Կաթնասուններից առավել հաճախ հանդիպում են կրծողների դասին պատկանող կենդանիները, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր կենդանիներից բնորոշ են՝ եղեգնակատուն, կռնչան բաղը, ճահճակուղբը, լճագորտը, ժայռային մողեսը, սովորական լորտուն, տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը, մոխրագույն առնետը, գայլը, աքիսը:

Անողնաշարավոր կենդանիներից՝ ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճրիկը, մորեխը, կաղամբաթիթեռը, ճանճերը, մոծակները: Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.): Հազվադեպ հանդիպում է

նար Արարատյան որդան կարմիր (Porphyrphora hamnelii Brandt): Տարածաշրջանում հանդիպում են նաև որսի կենդանիներ՝ մշկամուկ, շնագայլ, խեցգետին (վայրի): Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել:

2.8 Հողային ռեսուրսներ

Կառուցապատման նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1800 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 360 խմ ծավալով հողային զանգվածը կօգտաործվի տարածքի հարթեցման աշխատանքների նպատակով, մնացած մասը՝ 1440 խմ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.9 Թափոնների կառավարում

Համայնքի տարածքում աղբահանության նպատակով տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղեր: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է 21600 կգ /ծածակագիրը՝ 9120040001004/և շինարարական աղբն է 20խմ /ծածակագիրը՝ 9120060101004/: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը և շինարարության փուլում և շահագործման փուլում կտեղափոխվի մոտակա կենցաղային աղբի աղբավայր:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել ֆաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է յուրաքանչյուր շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ

ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Տարածքում կտնկվեն բերքատու ծառեր: Տարածքի ոռոգումը կիրականացվի հարևանությամբ անցնող գոյություն ունեցող ոռոգման ցանցից:

4. Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
 - բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
 - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
 - իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5. Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

6. 4. Մշտադիտարկումների իրականացման պլան

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է՝ 1250000 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությանը սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն

<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոդիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով,;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների անվադողերը շինարարական հրապարակից ելքի ժամանակ պետք է լվացվեն ջրի շիթով, ջուրը կենթարկվի մաքրման պարզարանում ապա կօգտագործվի ջրցանման նպատակով, իսկ փոքր քանակի նստվածքը կհեռացվի շինարարական աղբի հետ:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի ամբողջական լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների	Կապալառու

	վայր			ընթացքում	
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Մրգատու ծառերի տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը,
2. ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» N 874-Ն որոշումը :
3. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին N 342-Ն հրամանը
4. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
5. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
6. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
7. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
8. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
9. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
10. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
11. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
12. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
13. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
14. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վրձավիրի մարզ, Բաղրամյան/Վաղ /
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՆՈՒԹՅԱԿԱՏԱԿԱԳԾԱԿԻՆ ՆՈՒՍԱԿՈՒԿԵՐ)

N 9 29 12 2020 թ.

Օբյեկտ Եւրո Գրքերը գրքերը քննարկելու նպատակով
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
Վերականգնողական աշխատանքներ հիմնարկում
(հակիրճ բնորոշումը, հզորությունը
նախագծային փաստաթղթերի մշակման համար:

Վերականգնողական աշխատանքներ
նիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Եւրո Գրքերը գրքերը քննարկելու նպատակով
(մարզի, հյւնանքի, փողոցի անվանումները, շենքի համարը/հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող ՍՊԸ «Գրքեր»
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Հ.Գ.Կ. 05122018-04-0015
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)
Առաջադրանքի գործողության ժամկետը Գրքեր
(N Ի հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անիտի սխեմայով՝ Ս 1.500)

1. Հողամասը գտնվում է Գրքեր
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 0,4023 հա
(հողամասի սահմանները կտորիկնատային նշահարմար: մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը Գրքեր
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Եւրո Գրքերը
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) Չկա
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր Կ Գրքերը
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) Չկա
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատկագծային սահմանափակումներ Չկա
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների

Նկատմամբ սահմանափակումները, այդ թվում սերվիտուտները)

ՆԱՍՆԱԳՑԱՅԻՆ ՊԱՒԱՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Ս 1-500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Նախագծով Գյուլ Զրեթ, Կարապետ Կրեկեյ
(եյնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից անկախ բաղաբաշխական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված (կազմավորվող) բաղաբաշխական միջավայրի պայմաններին)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) 8-105

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) Կարապետ Կրեկեյ

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) Դեռ ԳՏ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) 100%

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) 60%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) 40%

9.7. այլ պահանջներ Չկա

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթակառուցությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում
Կցվում է Ներքևում Կարապետ Կրեկեյ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում
Կցվում է Ներքևում Կարապետ Կրեկեյ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում
Կցվում է Չկա
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը
Կցվում է Չկա
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ Չկա

12.6. աղբահանություն Ներքևում Կարապետ Կրեկեյ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում
Ըստ Նախագծով
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում
Կա Նախագծով Կարապետ Կրեկեյ
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովագղ և այլն)

15. Շինարարական նյութեր
Դրա, Կարապետ Կրեկեյ, Կրեկեյ Կարապետ Կ
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ
Ըստ Նախագծով Կարապետ Կրեկեյ

15. Շինարարական ելույթեր

Կունյազաբաբազյան, յուսաբորոժ
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ նյախանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

16. Պաշտպանական կառույցներ

Փաք, ազիզյան, Կենյանց, ամբաստան
(շինարարական ելույթերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

17. Հակահրդեհային պահանջներ

Րաբ Եսրմույսի վախանջներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Րաբ Եսրմույսի վախանջներ
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

19. Շրջակա միջավայրի պահպանում

Րաբ Եսրմույսի վախանջներ
Րաբ Եսրմույսի
(շրջակա միջավայրը վնասգույժ ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Րաբ Յ.Է. Եսրմույսի
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տեսեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Տեղ Րաբ
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծային փաստաթղթերի արձանագրությանը ներկայացվող պահանջներ

Կամուխիր փորցածնուցուն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձարկման տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Րաբ Կարգի
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ կարգային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Րաբ Կարգի
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Րաբ Կարգի
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահպանումների տեղադրում

27. Այլ պայմաններ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. Տ.



Րաբ Կարգի (Կարգի)

ԳՈՒ ՄԻՐԶՈՅԱՆ

ստորագրությունը

անունը, ազգանունը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «5» Ղեկտմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒԼՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան (Էջմիածնի շրջ.) հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍՎՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր 30/11/2018թ. ք. Վաղարշապատ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-030-0134-0005

Մակերեսի չափը (հա)՝ 0.4023

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Նաիրի Ասլանյան
 գրաղեցրած պաշտոնը՝ Մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր
 Կ.Տ.



Հավելված №1

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 30-ի N379Ն որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ
(ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ- ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)

Հաշվառման քարտ N 150998660


(պայմանագրի կնքման վայրը)

« 14 » 12 20 17 թ.

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան, Արուվյան 66ա
 (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
 ի դեմս Գլխավոր տնօրեն Կրիստիան Լըֆեի, որը գործում է
 (անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՁ N 0001 Լիցենզիայի
 (գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)
 հիման վրա, մի կողմից, և բաժանորդը՝

Վերականգնողական ՕԶԻԿ Ներդրամատակարար
 (անունը, հայրանունը, ազգանունը)

Քրիստոֆորյան Երվանդյան Զեյն
 (ընկերության վայրը, հիացման կետի հասցեն)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
 - 1) **հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 2) **կանոններ**՝ հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.
 - 3) **առևտրային հաշվառքի սարք**՝ պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.
 - 4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում**՝ պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խախտումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.
 - 5) **հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել

[Handwritten signature]
[Խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրամեղման (կեղտաջրերի մաքրման)]

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

- 1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,
- 2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,
- 3) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի անկայության համատեղ ստուգման նպատակով,
- 4) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,
- 5) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:
- 5. Բաժանորդն իրավունք ունի՝
 - 1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին կանոններով սահմանված կարգով և ժամկետում չճանաչման դեպքում մինչև ծանուցվելը կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,
 - 2) պահանջել որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ դրա ապահովագրակցումը կամ ստուգաչափումը, իրականացնել իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,

4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

- 1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան,
- 2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,
- 3) առևտրային հաշվառքի սարքի ապահովագրակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
- 4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
- 5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- 6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը և այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
- 7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատուցված ծառայությունների բանակի և դրա դիմաց բաժանորդի կողմից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվություն՝ կանոններով սահմանված կարգով,
- 8) մատուցած ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի վերաբերյալ բաժանորդի առարկության դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների բանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոններով սահմանված կարգով կատարել ուղղում, չյադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,
- 9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:
- 7. Մատակարարն իրավունք ունի՝
 - 1) բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի անկայությունը,
 - 2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

4. ՄԱՏՈՒԹՎԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խնելու ջրի քանակը որոշվում է սույն պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառչի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:
- 9. Առևտրային հաշվառչի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- 10. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող կեղտաջրերի քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խնելու ջրի քանակին:
- 11. Առևտրային հաշվառչի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խնելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- 12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարածաշրջանները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խնելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվճարվելու մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում մինչև վեճի վերջնական լուծումը:

5. ՄԱՏԱԿԱՐԿՎԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:
- 14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:
- 15. Մատակարարը իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող քանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների պասսարկման կետերում տեղադրում է հաշվարկային ամսում բաժանորդին մատուցված ծառայությունների քանակի և արժեքի մասին տեղեկատվություն՝ կանոններով սահմանված ժամկետում:
- 16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար մատուցված ծառայությունների դիմաց վճարում է սույն պայմանագրի 15-րդ կետում նշված տեղեկատվության հրապարակումից հետո՝ կանոններով սահմանված ժամկետում:
- 17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝

հետախուսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է վերսկսել ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառչի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված խնելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված խնելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, Կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

22. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՐԱՑՎԱԾՔԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

23. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնց առաջացել են կողմերի կամից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խղճելիտեղ են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են ընկալվում և տեխնաձին աղետները, քննության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրիեղելներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադրվելը, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

24. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՑՈՒՄԸ

25. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՑՈՒՄԸ

26. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

27. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

28. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

29. Սույն պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
- 2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
- 3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

30. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒԹՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՔԱՏՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

31. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

32. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

33. Սույն պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Բ.Երևան, Արուսյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115

Էլ. փոստ՝ office@veolijur.am
Հ/հ 11500351362015
Բանկ՝ «Տնօրինչեքսբանկ» ՓԲԸ
Գործունեության կոնցիալ՝ № N 0001
Գլխավոր տնօրեն



Լ.Ը.Ֆե
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝
(ստորագրություն)

Ս.Գ. Զոհրաբյան
(ստորագրածանձան անվանումը)

Տ.Կ. Վ. Քարամյան
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝
(անուն, ազգանուն)

Բնակության վայրը՝
Վր. Մանյան

Ծանուցման հասցեն՝
Բաղրամյան 2թիվ

Էլ. փոստ _____

Հեռախոս քաղ. _____

Հեռախոս քցջ. 055-11-11-77

Անձը հաստատող փաստաթղթի
տվյալներ:
AKU381578, 057, 02.10.2019թ.

Օ.Կ. Վ. Քարամյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)



Հավելված N°2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի մայիսի 31-ի N218Ը որոշման

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Վ. Արևելս 29.08.2014 թվական
(կնքման վայրը)

Մատակարարը՝ «ԻՏԿ» ԲԻՅ «ԵՆԵԱՎԵՐՆ» ՏԺԸ
Վ. Արևելս Ա. Արևելսյան 55Կ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմ Ցամաքաօդային փոխադրման Դոքտրինայի իրականացման
վարչության գլխավոր տնօրենի Կարգավորման Դեպարտամենտի
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում
լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ ՕՆԻԿ Կ/ԽՎԵՐԴՅԱՆ ԱՆՅ. ԲԿՕ381578, 02.10.2009թ.
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, 057
իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը,
ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի
Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)
հաստատած՝ Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման
կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ԴԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական Էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական Էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. Մատակարարը պարտավոր է՝

- 1) Արմավիրի ԵւրոԿ. Գ. Բազմաբնակի (390 ԿՎՎ-202)
Շահումյանի Բն-2
հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական Էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի N°1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N°2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միազիծ սխեմայի:
- 2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը:
- 3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:
- 4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը:
- 5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն:

- 6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի,
- 7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները:
- 8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները:
- 9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում:
- 10) շուրջօրյա գործող Օ80000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական Էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:
- 11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:
- 12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:
- 13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական Էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական Էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ:

4. Մատակարարն իրավունք ունի՝

- 1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

- 2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական Էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. Սպառողը պարտավոր է

- 1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական Էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
- 2) մատակարարվող էլեկտրական Էներգիան օգտագործել կենցաղային նշանակությամբ:
- 3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը:
- 4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին:
- 5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. Սպառողն իրավունք ունի՝

- 1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:
- 2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար:
- 3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՑԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՅԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7. Սպառված էլեկտրական Էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:
- 8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական Էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական Էներգիայի այդ քանակը:
- 9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:
- 10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական Էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական Էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:
- 11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական Էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական Էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական Էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
- 12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական Էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
- 13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս չողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան շիմավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

- 14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:
- 15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՑՈՒՄԸ

- 16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) Էլեկտրամատակարարման սխեման ապահովում է Էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:
- 17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:
- 18. Չի թույլատրվում այն սպառողների Էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց Էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մայրկայանի) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:
- 19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

- 1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման:
- 2) Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:
- 20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝
 - 1) սպառված Էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և չարգով վճարում չկատարելու դեպքում:
 - 2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել Էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված Էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ Էլեկտրական Էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից:
 - 3) եթե Սպառողը Էլեկտրական Էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով:
 - 4) Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում:
 - 5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս Էլեկտրական Էներգիան սպառելու դեպքում:
 - 6) Էլեկտրական Էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:
- 21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝
 - 1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում:
 - 2) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի:

- 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
- 22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:
- 23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական Էներգիայի մատակարարման սահմանափակումն ու ղաղարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 24. Սպառողի Էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող Էլեկտրարտեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:
- 25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:
- 26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:
- 27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:
- 28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված NՊ1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 30. Եթե Սպառողի Էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:
- 31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:
- 32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից Էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված Էլեկտրաէներգիայի բանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

- 33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և մինչև սույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:
- 34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղբորդվող հորդառատ անձրևներ, ձնաքթեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է առաջիկայ ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել Էլեկտրական Էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
- 2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
- 3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

41. Հանձնաժողովի կողմից Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացակառնով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵՐԱՊԱՏՆԵՐԻ ՑՄԱԿԸ

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝
- 1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում:
 - 2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում:
 - 3) Սպառողի (Ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը:
 - 4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը:
 - 5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանագատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանագատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում:
 - 6) 0.4կՎ և բարձր լարման սպառողների (թացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:

12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝ <u>«ՆՏԳ» ՉԻՔԸ</u>	Սպառող՝ <u>ՕՐԻԿ ԱՅՔԱՆՎԱԿԱՆ ԱՎԻՈՒՅՐՅԱՆ</u>
<u>«ՄՈՍԱԼԵՐ» ՉԻՔԸ</u>	Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ <u>Արմ. Ճեղք Գ.Յ. Բազմաբնակարան (ԿԳՃ.ՉԿԸ. Շահահամլյանի Բուլ. 2</u>
Գտնվելու վայրը՝ <u>Վ.Յեկուժ, Ա. Ուխանյանի 57Կ</u>	Ծանուցման հասցեն՝
Հեռախոս <u>ՕՏՂ-65-16-97</u>	
Էլ. փոստ <u>mosaler-branch</u>	Էլ. փոստ _____
@ <u>enr.am</u>	
ՀՎՀՀ <u>01520882</u>	Հեռախոս <u>055-11-11-77</u>
Յ/հ <u>2479 6008 95160020</u>	ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում)
Բանկ <u>«Շիրակ Զինվորական» ՉԻՔԸ</u>	Բանկ _____
Գործունեության լիցենզիա N _____	Յ/հ _____
<u>Արթուր Զեկույան</u>	<u>Օրիկ Այվազյան</u>
(ստորագրություն, անուն, ազգանուն)	(ստորագրություն, անուն, ազգանուն)



Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի
2014 թվականի հոկտեմբերի 15-ի N 383Ն որոշմամբ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ - ԲԱԺԱՆՈՐԴ (ԲՆԱԿԻԶ))**

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 62-027693

Վ. Արմաշյան «05» 12 2019 թվական
(պայմանագրի կնքման վայրը)

Մատակարարը՝ Գազարու՝ Արմաշյան "ԻՖՊ" Վ. Արմաշյան
(գազակերպության անվանումը, գտնվելու վայրը)
Քրեիսյան խճ. 43

Արմաշյանի ջգտ՝ Վ. Արմաշյան, Իսահանյան 13.
(մաքնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս՝ Կրեյտիտ Կապիտալ ՍԵՎԵՐՆԵՍԻՍ
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է 15.01.15 01-38/55, Կապիտալ ՍԵՎԵՐՆԵՍԻՍ հիման վրա, մի
կողմից, (գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Բաժանորդը՝ Սեբե Շրջանային Շրջակայք
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ջյուլիա Իսահանյան, Իսահանյան Բաղրամյան, 14
(ներտնային գազասպառողի համակարգի գտնվելու վայրը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
 - 1) **Հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
 - 2) **ԳՍՕԿ**՝ Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95Ն

որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.

- 3) **Հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել անհրաժեշտ քանակի բնական գազ, իսկ Բաժանորդը՝ վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:
- 4. Մատակարարը պարտավոր է.
 - 1) ապահովել Բաժանորդի հուսալի գազամատակարարումը՝ բնակչությանը մատակարարվող բնական գազին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխանող բնական գազով.
 - 2) առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցումը, հերթական կամ արտահերթ ստուգաչափումն իրականացնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.
 - 3) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ.
 - 4) Բաժանորդի գազամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերսկսումը, ինչպես նաև այդ մասին Բաժանորդին նախազգուշացումն իրականացնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում,
 - 5) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված գազի համար վճարման փաստաթղթերը՝ սույն պայմանագրի և ԳՄՕԿ-ի համաձայն.
 - 6) Բաժանորդի կողմից վճարման փաստաթղթում վճարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով ԳՄՕԿ-ով սահմանված ժամկետում

պարզաբանել բնական գազի ծախսի և արժեքի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում ԳՄՕԿ-ով սահմանված կարգով կատարել ուղղում, չղադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս վճարել է գազի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:

- 7) ունենալ մշտական գործող հեռախոսակապով շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայություն, որի հեռախոսահամարի մասին տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.
- 8) ապահովել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի տեսանելիությունը.
- 9) անձամբ կամ իր հանձնարարությամբ՝ սպասարկող կազմակերպության միջոցով, Բաժանորդին մատուցել ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ՝ համաձայն ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի (հավելված N2).
- 10) գազասպառման համակարգում փոփոխություններ՝ կատարելու վերաբերյալ Բաժանորդի դիմումը քննարկել և փոփոխությունները կատարել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.
- 11) Բաժանորդի դիմումի հիման վրա կնքել գազամատակարարման ցանցին միացված, սակայն օգտագործման մեջ չգտնվող գազօգտագործող սարքավորման գազի մուտքային գծերի փակմանը և դրա վերաբերյալ կազմել համապատասխան ակտ: Կնքված գազօգտագործող սարքավորումը համարվում է աշխատանքի մեջ չգտնվող:
- 5. Մատակարարն իրավունք ունի կնքել առևտրային հաշվառքի սարքը, ինչպես նաև կնքել դրա արկղը:
- 6. Բաժանորդը պարտավոր է.
 - 1) վճարել մատակարարված (վերահաշվարկված) գազի և ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով.
 - 2) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը: Խախտումներ հայտնաբերելու դեպքում հայտնել Մատակարարին.
 - 3) գազօգտագործող սարքավորման փոխարինման կամ նոր սարքերի հավաքակցման կամ գազասպառման համակարգում այլ փոփոխություններ կատարելու համար

փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում
Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի
սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան
փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

- 29. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.
 - 1) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
 - 2) Բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և
մատակարարված (վերահաշվարկված) բնական գազի և մատուցված տեխնիկական
սպասարկման ծառայության համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
 - 3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և
սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
- 30. Սույն պայմանագիրը մատակարարի կողմից միակողմանի կարող է լուծվել բաժանորդի
կողմից սույն պայմանագրի 6-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված
պարտավորությունը չկատարելու դեպքում:

12. ԿՈՂՄԵՐԻ ԵՆՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ՆԱԲԱԺԱՆՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑՆԱԿԸ

- 31. Կողմերը պարտավոր են միմյանց ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ
փաստաթղթերը հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով
հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին
ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են
ստացակետով, եթե առանձին դեպքերի համար ԳՍՕԿ-ով կամ սույն պայմանագրով
նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
- 32. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության
դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց նոր ծանուցման հասցեի վերաբերյալ:
- 33. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի
փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված
փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:
- 34. Սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածներն են՝.
 - 1) Առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ N1 հավելվածը.
 - 2) Ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի վերաբերյալ N2 հավելվածը:

Մատակարար՝

Բաժանորդ՝

Գրեգորի Ա. Վարդանյան
(վաշտոնատար անձի անունը, ազգանունը)

Օ.Յ. Չիբուկչյան
(անունը, հայրանունը, ազգանունը)

Վ.Արմենյան, Խաչատրյան 13
(գտնվելու վայրը)

Գրեգորի Կ. Կարսի 41
(բնակության վայրը)

Գ. Ծանուցում
(ծանուցման վայրի հասցեն)

Գրեգորի Կ. Կարսի 41
(ծանուցման վայրի հասցեն)

220033331228000
(Հ/Հ)

AS0676184, 26.06.2019
(անձնագրի տվյալներ) 001

5-64-14
(էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը)

055-11-11-77
(էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը)

(ստորագրությունը)

(ստորագրությունը)



ԳԳՍ թեժ գիծ 0237-2-22-42

